

Պատասխանատուները հայոց դէմ . գործադրուած ցեղասպանութեան

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

Հայոց դէմ դործադրուած ցեղասպանութեան նուիրուած բազմաթիւ ուսումնասիրութիւնները, հրատարակուած յուշագրութիւններն ու առկայ փաստերը ցոյց կու տան, թէ Հայոց պարտադրուած տարագրութիւնները կատարուեցան ըստ որոշ ծրագրի, որ յղացուեցաւ ո՛չ թէ Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան կառավարութեան՝ այլ այդ կուսակցութեան Կեդրոնական Մարմինին կողմէ, եւ մշակուեցաւ Մասնաւոր Կազմակերպութեան ժողովներուն ընթացքին, երբ Հայկական Տասնհինգը դարձնելու համար առաւելագոյն չափով ամբողջական՝ ժողովականները դիմեցին տեղահանութեան, կողոպուտի, չարչարանքի եւ սպանդի հին ու նոր բոլոր միջոցառումներուն, օրինակ առին անոնցմէ, զարգացուցին եւ ամբողջացուցին զանոնք եւ վերածեցին գործունէութեան ծրագիրի: Առ այդ մշակեցին ժամանակագրական տախտակ, գործելակերպի ուղղութիւն եւ ձև, որոշ ընթացք եւ կազմակերպութիւն: Հայկական Տասնհինգը դնելէ ետք որոշ ձևեր մը մէջ՝ անիկա յանձնուեցաւ կառավարութեան, որ վաւերացնելէ ետք ծրագիրը՝ անոր իրազործումին համար յատկացուց որոշ գումար՝ զինուորական գաղտնի եւ յայտնի աղբիւրներէն, որմէ ետք՝ ծրագիրին գործադրութիւնը յանձնուեցաւ քաղաքային իշխանութիւններուն. որպէս ներքին գործերու նախարար՝ Թալէաթ ձեռք զարկաւ գործին. բայց որովհետեւ Օսմանեան Կայսրութեան սահմաններէն ներս կային նաեւ հայ բանակայիններ՝ այդ վերջիններուն բնաջնջումի գործը յանձնուեցաւ զինուորական նախարարու-

թեան, որ, սակայն, բաւարարուած չմնաց ընա՛ջնջումովը իրեն ենթակայ հայ զինուորներուն, այլ ձեռք երկարեց նաեւ քաղաքային իշխանութիւններուն եւ անոնց տրամադրեց փոխադրական միջոցներ, ռազմանիւթ, նիւթական օժանդակութիւն եւ կէս-զինուորական միաւորներ :

Երիտասարդ-թուրք Կուսակցութեան Կեդրոնական Մարմինը պետական եւ զինուորական մարմիններէն վեր՝ պետութեան մէջ պետութիւն մը ըլլալու հանդամանքն ունէր. ունէր նաեւ իր ինքնուրոյն կազմակերպութիւնը, ղեկավարութիւնը, կէս-զինուորական սլոժ, անկախ բանակայինի նկարագիրը եւ հեռադրական զաղտնի բանալիներ : 1908 թուականի սահմանադրութեան հռչակումէն առաջ անիկա ծառայեց Երիտասարդ-թուրք Կուսակցութեան զաղափարաբանութիւնը տարածելու, իսկ սահմանադրութեան հռչակումէն ետք, երբ սահմանադրականօրէն կարելի դարձաւ ստեղծումը կուսակցութիւններուն կամ անոնց դուրս գալը ապօրինի կացութենէն՝ անիկա, այդ Մասնաւոր Կազմակերպութիւնը, իջաւ հրատարակ բռնի կերպով պայքարելու համար անոնց դէմ եւ ապահովելու անխափան յառաջնիթացը Երիտասարդ-թուրք Կուսակցութեան : Այդ կազմակերպութեան զոհերը դարձան քաղաքական եւ կուսակցական հակառակորդները Երիտասարդ-թուրք կուսակցութեան. ահա թէ ինչպէս կարճ շրջանի մը մէջ լուծութիւնը պարտադրուեցաւ Վոսիփորի ափերուն վրայ եւ հաստատուեցաւ միահեծան իշխանութիւնը երիտասարդ-թրքութեան : Հեղ մը որ եղաւ այնպէս՝ Երիտասարդ-թուրք Կուսակցութիւնը ձեռնարկեց Օսմանեան Կայսրութիւնը թրքացնելու աւագ պարտականութեան, պարտականութիւն մը, որ արիւնոտ էր եւ ոճրամէտ, որովհետեւ անիկա կը հիմնաւորուէր սպանդով եւ ջարդով եւ յառաջ կ'ընար մղուիլ միմիայն ոչնչացումովը ոչ-թուրք տարրերուն :

Տեղի ունեցած բոլոր տեղահանութիւններն ալ ունին համն ու բոյրը արիւնին : Զանցառելի է թիւը անոնց, որոնք չաւարտեցան ընդհանրական ջարդով, սպանդով եւ արիւնով : Մերթ տեղահանութիւններն ու ջարդերը սկսան միասին, իսկ պատահեցան վայրեր, ուր տեղի ունեցան միմիայն ջարդեր : Տեղահանութիւններուն յաջորդող եւ այլապէս եղող ջարդերը դրին խտիբ ո՛չ սեռի եւ ո՛չ ալ տարիքի. ու եթէ սկզբնական շրջանին բացառուեցան մանկամարդ կիները, զիտակցութեան չհասած փոքրերը եւ թուրքի կամ քիւրտի հետ ամուսնացած հայուհիները՝ շա՛տ շուտով, սակայն, վերջ տրուեցաւ այդ բացառումին եւ անոնք ալ ենթարկուեցան ճակատագիրին իրենց հարազատներուն : Պահ մը թուեցաւ, թէ պիտի խնայուէր

աւետարանական եւ կաթողիկէ հայերուն, եւ առ այդ կատարուեցան յայտարարութիւններ ալ ամերիկեան, աւստրիական, գերման եւ պապական իշխանութիւններուն, բայց այդ իշխանութիւններուն հասած տեղեկազիրները ցոյց տուին, թէ կը ստէր Երիտասարդութուրք Կուսակցութեան կառավարութիւնը, եւ թէ հակառակ կատարուած խոստումներուն՝ կը շարունակուէին տեղահանութիւնները եւ անոնց կրնկակոխ հետեւող ջարդերը: Եւ, ուէ մէկէն առաջ եւ աւելի, իրենք, թուրք ղեկավարները, գիտէին անհեթեթութիւնը իրենց խոստումներուն եւ յայտարարութիւններուն: Այսօր ո՛չ մէկ համոզիչ տուեալ կայ հաւատ ընծայելու համար երիտասարդութուրք ղեկավարներու յետմահու հրատարակած «յուշեր»ուն(1) անկեղծութեան եւ մարդասիրական զգացումներուն, որովհետեւ անոնց բոլորն ալ պա՛րզօրէն կը կեղծեն: Քսանական թուականներէն ետք լոյսին եկած թրքական հրատարակութիւններուն մէջ ո՛չ իսկ մէկ տող կայ որ տայ ճշմարտութիւնը, որ ընդունի «տեղահանութիւն» տարազին երիտասարդութուրք (իմա՛ թուրք) բացատրութիւնը. ահա թէ ինչո՛ւ համար տակաւին չզտնուեցաւ մէկը(2), որ կարենար մերժել եւ ուրանալ նկարագիրը Հայկական Տասնհինգին եւ զտնէր մեղմացուցիչ դէպք յանցանաց մը կատարուածներուն համար:

Բայց Երիտասարդութուրք Կուսակցութեան կառավարութեան անկումով իրենց աւարտին չհասան տեղահանութիւններն ու ջարդերը. եթէ մինչեւ 1918 թ. Մասնաւոր Կազմակերպութիւնն ու անոր ջարդարարներուն հետեւող թուրք եւ քիւրտ ամբօխն էին տե-

1) Որքան որ ծանօթ է մեզի՝ մինչեւ հիմա մամուլի մէջ կամ այլապէս լոյս տեսան յուշերը Թալէաթի, ձեմալի, Բիազիմ Բարապէֆիի, Ջիա փաշայի, Խամէք Ինէօնիլի, Ֆերիտ Էրտօղանի, Քըլըմ Ալիի, Ալի Ֆուատ Չեպետյի, ձեմալիստիմ էֆէնտիի, Բիազիմ Նամի Տուրուլի, Ալի Բեմալի, Բըգա Նուրի, Խալի Մենքէշէի եւ Տիգրանակերտի ջարդարար բժիշկ Ռեշիտի. իսկ էնվերի յուշերը, կամ աւելի միշտ պիտի ըլլար ըսել՝ օրագիրը, տակաւին կը մնայ անտիպ: Անշուշտ, պէ՛տք է որ ասոնցմէ դուրս գտնուին մասն յուշերը ա՛յլ երիտասարդ-բուրժուալ ալ, որոնց մասին ընդհանրապէս կը պակսին ամերթնշտ տեղեկութիւններ:

2) Հակառակ այս մշտարտութեան՝ Աւստր Բըգա Էզալ այն միա՛կ բուրքը, որ Թալէաթի կառավարութեան անկումէն եւ երիտասարդ-բուրժ վեկավարներու փախուստէն ետք ծերակոյտի հերքական միտերէն մէկուն ընթացքին յայտարարեց թիւր սպաննուած հայերուն եւ արարներուն, ու դատապարտեց երիտասարդ-բուրժ իշխանութիւնները իրենց կատարած արարներուն համար (տես՝ Ալեքսանդր Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան Մագումն ու Ջարդացումը, Պէյրուք, 1968, էջ 105-106):

դահանութիւնները կատարողները, այդ թուականէն ետք, երբ հրապարակ իջան ազգայնական-թուրքերը՝ այդ արարքները կատարողները եղան ազգայնական-թուրք բանակները՝ դործողութեան կեդրոն ունենալով Անդարան: Այսօր ամէն տուեալ կայ պնդելու, թէ ազգայնական-թուրքերը շարունակեցին այն ինչ որ սկսած էին երիտասարդ-թուրքերը՝ ճիշդ նոյն ձեւով, նոյն եռանդով, եւ նոյն ալ ատելութեամբ, միայն մէկ տարբերութեամբ, որ, երբ երիտասարդ-թուրքերը զէր տեղահանէին՝ ազգայնական-թուրքերը կը ջարդէին: Աւելին, եթէ այսօր բաւականաչափ հիմնաւորուած կը մնան երիտասարդ-թուրք իշխանութիւններուն կողմէ հայերուն վրայ ի դործ դրուած տեղահանութիւններն ու ջարդերը՝ այդ մէկն անո՛ր համար է, որ անոնք, այդ վերջինները, ունեցան իրենց օտար ականատեսները, յաճախ պաշտօնական ալ, ի՞նչ փոյթ թէ մերթ ընդ մերթ Պոլսոյ իշխանութիւնները փորձեցին լռեցնել զանոնք եւ փճացնել անոնց վկայութիւններուն հետ զիրենք նաեւ: Բայց նոյնը չեղաւ ազգայնական-թուրքերու կատարածներուն համար: Հրապարակի վրայ կար պարտուած Օսմանեան Կայսրութիւն մը, որուն, սակայն, խնայուեցաւ իսկական քաջը պարտութեան: Ու երբ յաղթականները մտան Պոլիս՝ զայն դտան արդէն իսկ դատարկուած երիտասարդ-թուրքերէ, որոնք սիրտի եւ միտքի ամենայն հանդարտութեամբ անցեր էին կայսրութեան արեւելեան շրջանները, ուր պահեցին ու պահպանեցին իրենց զինական ոյժը, նոյնիսկ երբեմն ուղմական, նիւթական եւ բարոյական օժանդակութեամբը յաղթականներուն, եւ յառաջացողին ազգայնական-թուրք շարժումը: Կը բաւէ միայն ըսել, թէ արեւելքէն եւ արեւմուտքէն իրենց ընձեռուած բարիքէն յղիպացած՝ նախկին երիտասարդ-թուրքերը կանգնեցան ոտքի, յաճախ ուղղութեամբը Պերլինէն եւ Մոսկուայէն հասնող թալէաթեան եւ էնվերեան հրահանգներուն, զինուորական եւ կուսակցական ղեկավարներուն եւ առատ, անհաշուելի ըլլալու չափ առատ ոսկիներուն: Եւ նոյն հետայն սկսաւ ազգայնական-թուրք շարժումը իր նիզակներուն սրութիւնը փորձել մահի եւ արիւնի ճապաղիքներէն նոր վերյառնող փոքրիկ Հայաստանին վրայ: Եւ պատահեցաւ այն՝ ինչ որ նորութիւն մը չէ՛ր բնաւ, այլ լո՛ւի մէկ շարունակութիւնը 1915-1918 թուականներու ընթացքին տեղի ունեցածներուն:

Բայց ո՛չ, այս անգամ չկա՛ր տեղահանութիւնը. ազգայնական-թուրքը երբեք չդործածե՛ց այդ բառը. ընդհակառակը, իբր եղաւ իսկապէս թրքական իմաստն անոր, եւ ջարդե՛ց ի՛նչ որ գտաւ, ո՛ր որ գտաւ, զո՛վ որ գտաւ:

Այս բոլորը, դժբախտաբար, անծանօթ մնացին արեւմուտքին, որ այլապէս ալ յողմած էր արդէն պատերազմէն եւ անոր ստեղծած

արհաւիրքներէն եւ ինկած վրան կողոպուտի, իրաւունքներու իւրացումին եւ մասամբ նորին: Եւ յետպատերազմեան շրջանի սակարկութիւններուն եւ խաժամութիւն մէջ՝ ազգայնական-թուրքերու կողմէ կատարուող ջարդերը չունեցան իրենց լեփսիւտները, մորկընթոնները եւ մնացեալները. ընդհակառակը, այդ ջարդերը մնացին մեկուսի կատարուող արարք, աչքէ հեռու եւ անլսելի: Եւ հայուն մահուան ազազակները խեղդուեցան թրքական թնդանօթներու եւ ումբերու յարուցած աղմուկին մէջ:

Այսպէ՛ս էր որ 1918-1923 երկարող ժամանակաշրջանը եղաւ լո՛կ մէկ շարունակութիւնը դիմք նախորդողին եւ փառապսակեց զայն(3):

Շա՛տ է գրուած Հայկական Տանհինգի ընթացքին կատարուածներու պատասխանատուութեան մասին: Տեղահանութիւններու եւ անոնց յաջորդող սպանդներու համար ձեմալ փաշա պատասխանատու կը նկատէ ուսերը, եւ կը ներկայացնէ հայերը «ստոր», «աննկարագիր», «ոճրագործ», «աւաղակ», «բմբոստ» եւ «վայրագ» վերագրիրներով, իսկ թուրքերը՝ «բարի», «խաղաղասէր», «այլասէր», «արդարամիտ» եւ տակաւին այլ շքեղ եւ դեղեցիկ անականներով: Յստակ է, որ ան ի յառաջագունէ որոշած է հարուածել հայութիւնը, եւ առ այդ՝ կրակ ու բոց կը ժայթքէ ամէն անգամ որ կը յիշէ Պոլսոյ ամերիկեան դեսպան Մորկընթոն կամ Պոլսոյ ուսական դեսպանատան առաջին թարգման՝ Անտրէ Մանտլսթամը: Արդարեւ, ըստ իր յուշերուն՝ թուրքը պատասխանատու չէ իր կատարածներուն համար. ընդհակառակը, իսկական զոհը թուրքն է, որ ջարդուելով հայերուն կողմէ՝ կորսնցուց մէկուկէս միլիոնէ ակելի մարդ:

Ընթերցողները, ակնատեսները, դեսպանական հիւպատոսները, օտար վկաները եւ ամբողջ հայ ժողովուրդը անհասկացող միամիտի տեղ դնելու այս մտայնութիւնը կը գլխէ ու կ'անցնի ամէ՛ն սահման՝ երբ անիկա իր յուշերու գիրքէն ներս կը զետեղէ ուս դեր-դնդապետ ոմն Դուբրտովսկիով մըն ալ 27 Փետրուարի, 1918, եւ 16 Ապրիլի, 1918 թուակիր երկու զեկոյցները:

3) Բայց ամբողջական ըմբիւռ համար հայերուն ջարդը, Անգարա՝ Ազդէյ-նամի հետ ստորագրեց 15 Ապրիլի 1836/1920 քուակիր զինուորական գաղտնի համաձայնագիր մը, որում կցուած յաւելումով մը համաձայն Ազդէյնամ յամձանառու կ'ըլլար իր սահմաններէն մերս արտօնել գայութիւնը եւ գործուճէութիւնը Մամաւար կազմակերպութեամ, եւ աջակցիլ անոր իր բոլոր միջոցներով: Համաձայնագիրին, յաւելումին եւ անոնց ըմկերացող գամագամ քուակիրում համար տես՝ Great Britain, Foreign Office, 371/4951/9278:

Կ'անդիտանանք, թէ ո՞վ է այս ուսար. մեղի կը թուի, թէ Բիեռ Լոթիէ կամ ծովակալ Չեսթըրի նկարագրելէն տիպար մըն է, որ, շատ հաւանաբար, որպէս պատերազմական գերի էյնալով թըրքական բանակին ձեռքը՝ իր ազատութիւնը դտաւ այս երկու վաւերագիրները ստորագրելով: Դեր-գնդապետը տեղեակ չէ թէ ի՞նչ բաներ պատահեցան 1915-1917 թուականի մինչեւ վերջը: չի գիտեր նաեւ, թէ թուրքն ինչո՞ւ համար էր որ կը ջարդէր հայը: Անոր ստորագրած երկու գեկոյցները այսօր կը վերբերեն կեղծ ըլլալու բտլո՛ր շնորհները, բայց ձեմալ եւ անոր հետ թալէաթ լորճնաշուրթն փառարանելէ ետք անոնց հեղինակը՝ իրենց յուշերուն մէջ կը գետեղեն զանոնք(4):

Իր յուշերով թալէաթ կը ներկայացնէ բոլորովին այլ պատկեր: Ըստ անոր՝ ըմբոստ էին հայերը. երբ անոնցմէ պահանջուեցաւ յանձնել իրենց զէնքերն ու զինամթերքը, զինուորական փախըտականներն ու ըմբոստութեան զեկավարները՝ ընդգլխմացան սոնոնք: Հայերը գտնուեցան օրինազանց եւ պետական հրահանգներուն շանսացին: Երբ անոնց ըսուեցաւ, թէ պէտք էր որ լքէին իրենց սոււնն ու տեղը՝ չենթարկուեցան ըսուածին: Ամէն կողմ կազմակերպուեցան հայերը, ամէն կողմ ըմբոստութեան դրօշ պարզեցին եւ վտանդեցին զինուորական երթուղիները: Օսմանեան փառապանծ բանակը հարուածեցին թիկունքէն, եւ Օսմանեան Կայսրութեան թշնամիներուն հետ յարաբերութեան մէջ մտան: Եւ այս բոլորէն ետք՝ պարզ էր որ տեղահանուէին անոնք: Եւ՝ տեղահանուեցան հայերը. բայց տեղահանութիւնը կատարուեցաւ շատ կանոնաւոր կերպով, ըստ կեդրոնական կառավարութեան հրահանգներուն. եւ եթէ աքսորի ճամբաներուն վրայ տեղի ունեցան անկարգութիւններ՝ անոնց պատասխանատուութիւնը չէր երթար կեդրոնական իշխանութիւններուն՝ այլ տեղահանութեան պաշտօնեաններուն, որոնցմէ «չատեր» ենթարկուեցան խտտադոյն պատիժներու: Ըստ թալէաթի՝ հայերու տեղահանութիւնը զինուորական անհրաժեշտութիւն մըն էր լոկ, եւ ինչ որ կատարուեցաւ՝ եղաւ պարզօրէն զինուորական նկատումներով՝ հակառակ որ ինք սկիզբը դէմ էր տեղահանութեան. ու եթէ հայերը մնային հանդարտ եւ չվտանդէին բանակին շարժումները՝ պիտի չըլլային տեղահանութիւնները(5):

Թալէաթին հետ նոյն կարծիքէն է նաեւ գերման դեսպան Վանկենհայմ, որուն համար հիմնականը կը մնար գերման յաղթա-

4) Djemal Pasha, *Memoires of a Turkish Statesman*, 1913-1919, London, 1922, pp. 240 ff.

5) *Talat Pasanin Hatiralari*, Istanbul, 1958, s. 62-74.

նակներուն թուրքին բերելիք զինուորական օժանդակութիւնը. այդ-
քա՛ն ատեն որ թուրքն այդ ընելու պատրաստ էր՝ ինքն ալ պատ-
րաստ էր ընդունելու հայերու տեղահանութեան եւ կոտորակումին
համար թուրքին յառաջ քաշելիք պատճառաբանութիւնները: Ի՞նչ
փոյթ թէ դերման հիւպատոսները պնդէին հակառակը եւ ցոյց տա-
լին յետնագոյն նպատակ մը հայերու տեղահանութեան մէջ: Ահա
թէ ինչո՛ւ համար դերման իշխանութիւնները պէտք էր որ ձեռնպահ
մնային եւ չմիջամտէին իրենց թուրք դաշնակիցին «ներքին հարցե-
րուն» եւ մամուլով տանէին քարոզչական այնպիսի՝ ընթացք մը, որ
շխանդարուէր թուրք-դերման զինուորական բարեկամութիւնը(6):

Աւստրո-Հունդարական Կայսրութի՛ւնը՝ բայց անիկա կը հե-
տեւէր դերման իշխանութիւններուն:

Տիրբանակերտի կուսակալ Տոքթոր Ռեշիտ, սակայն, յառաջ
կը մղէ թալէաթէն, էնվերէն, ձեմալէն եւ մնացեալ երիտասարդ-
թուրքերէն բոլորովին այլ տեսակէտ: Ըստ անոր՝ հայութիւնը
վտանդ մըն էր թրքութեան ապագային համար: Կային երկու կա-
րեւիութիւններ, — կա՛մ թուրքը պիտի ջարդէր հայը եւ տեւէր, եւ
կա՛մ ալ՝ հայը ջարդէր թուրքը եւ հաստատէր անկախ ինքնիշխա-
նութիւն: Վտանդը այդքան մեծ էր որ տատամսում չէր ենթադրեր:
Պէտք էր արագ շարժիլ եւ որոշել: Եւ Ռեշիտ շարժեցաւ: Թուրքն
ունէր ամէ՛ն միջոց քանդելու հայութիւնը, որովհետեւ ունէր բա-
նակ, ունէր զինական ոյժ եւ կազմակերպութիւն: Ռեշիտի համար
հարցը անհատականէն, պետականէն, կամ նո՛յնիսկ դադափարակա-
նէն վեր՝ ազգային դոյութեան խնդիր մըն էր լոկ. իսկ այդ խնդի-
րը կը լուծուէր ի նպաստ թուրքին՝ միա՛յն ջարդովը, ամբողջական
չքացումովը հայութեան: Ահա թէ ինչո՛ւ համար Տիրբանակերտի
կուսակալութեան սահմաններէն ներս տեղի ունեցող տեղահանու-
թիւնները անմիջապէս վերածուեցան ջարդի եւ հայերէն շա՛տ քի-
չեր կարողացան հասնիլ ապահով փեր(7):

Բայց այսպէս չի մտածեր Պեհաէտտին Շաքիր, կատաղի թու-
րանական մը, որ շա՛տ աւելի մօտիկը կը կենայ էնվերին՝ քան ու-
րիշ ոեւէ մէկը: Ըստ անոր՝ հայերուն բնաջնջումը միա՛կ դրաւա-
կանն էր Մեծ Թուրանիայի մը կերտումին եւ առ այդ՝ ինչ որ կը
կենար թրքութեան դէպի արեւելք մղումի ճանապարհին վրայ՝ ան-
հրաժեշտօրէն պէտք էր որ չքանար: Ահա թէ ինչո՛ւ համար հայու-

6) Johannes Lepsius, *Deutschland und Armenien, 1914-1918*, Potsdam, 1919, s. 79 եւ 96-97, եւ Ulrich Trampener, *Germany and the Ottoman Empire, 1914-1918*, Princeton, New Jersey, 1968, pp. 221-222.

7) «Արեւ» (օրաթերթ, Գահիրէ), 27 Յուլիս, 1965, էջ 2-3:

Թիւնը ի յառաջագունէ դատապարտուած էր ոչնչացումի: Ասիկա պարզ հաշուարկում մըն էր լոկ. Թուրքը դուրս էր դրուած Եւրո-բոպայէն, եւ շատ հաւանաբար դուրս դրուէր Պալքաններէն ալ. ուրեմն անոր կը մնար տարածուիլ դէպի արեւելք: Իսկ Հոն առաջնորդող ճամբուն վրայ կը կենային հայերը: Եթէ Թուրքերը պիտի հիմնէին զո՛ւտ ասիական կայսրութիւն մը, որ բազկացած ըլլար միմիայն Թրքական տարրերէն, հայերը եւ անոնց նման ոչ-Թրքական տարրերը պէտք էր որ բնաջնջուէին: Հոս զգացումն ու խիղճը դործ չունէին: Այդքան(8):

Մնացեալ երիտասարդ-Թուրք ղեկավարներուն համար հայութեան բնաջնջումը իրաւործումն էր «ազգային նպատակներուն»: Աքչուրա օղլու Մեհմետը, Ջիա Կէօքալիը, Ահմետ Էմին Եալանը, Նազըմը եւ ուրիշներ սրպէս Թուրանականներ՝ հայութեան բնաջնջումը կը պատճառարանէին «զազափարական» տուեալներով, որոնց առաջին հիմնական քայլն էր Թրքացումը Օսմանեան կայսրութեան: Այս մարդերուն համար Օկիլութ Քոնթեան զբաղաչտուութեանն դէպի Թրքութիւն եւ Թուրանականութիւն քայլ մըն էր լոկ, զոր առնելը կը մնար անյետաձգելի անհրաժեշտութիւն:

Գաղափարարանական, ընկերային եւ քաղաքական այս մըթնոլորտին մէջ անհրաժեշտ կը դառնայ, սակայն, լոյսին բերել իսկական պատկանելիութիւնը այս երիտասարդ-Թուրքերուն: Տակաւին չդառնուեցաւ ոեւէ մէկ ուսումնասիրող, որ ձեռք առնէր ա՛յս հարցը եւ, առնուազն, աշխատէր զտնել հեռաւոր կամ մօտաւոր մէկ կապը անոնց եւ ազատ-որմնազրութեան միջեւ: Բիէն էրեսը կը մընայ առանձի՛նը այս ուղղութեամբ, բայց անոր ալ կը պակսի գիտական վերլուծումը(9):

8) Խատիսեամ, Էշ. աշխ., էջ 77:

9) Տես՝ Pierre Hépešs, *Le Dernier Bal du «Grand Soir» ou la «République Universelle» de Van un à deux mille*, Beyrouth, n. d. Ազատ-Որմնազրութեամ եւ երիտասարդ-քրքուրեան կապերուն մասին կը խօսին մահ. ֆիլազիմ Գարապե՛ֆիք, Մուսթաֆա Թուրան եւ Էրմեսք Էսմըմսուքն Բամզոք, տես՝ Kiazim Karabekir, *Çihan Harbine Neden Girdik, Nasil Girdik, Nasil Idare Ettik*, kitab 2, Istanbul, 1937, s. 94-107, Mustafa Turan, *Taskislada 31 Mart Faciası*, Istanbul, 1963, s. 5-44, եւ Ernest Edmondson Ramsaur, Jr., *The Young Turks: Prelude to the Revolution of 1908*, Beirut, 1965, pp. 94-139: Հետագային Պոլսոյ մեծագոյն օրեակի 1919 թ.ի որոշմա-ցիքը պարզօրէն պիտի ըսէր, թէ «պատկառազու ժողովը այն համազումին յամ-գած է, որ վերջին պատերազմի ընթացքին հայրենակիցները իրենց բոյներէն հե-ռացնել բռնադատելու, սպաննել տալու, ամենց ինչքերը բռնի խլելու մտան յամ-ցանքներ գործած են Մեհմետ Թալէթը, Միտհաթ Շիւքրի, Մուսթաֆա Բամիք,

Այսօր աւելի՛ քան յստակ է առնչութիւնը երիտասարդ-թըր-յութեան, ազգայնական-թըրքութեան եւ ազատ-որմնադրութեան. յստակ է անոնց կազմակերպչական դրութիւններուն յարանմանութիւնն ալ: Յստակ է նոյնպէս հանդիտութիւնը անոնց գործելակերպին: Բայց հակառակ այս բոլորին՝ տակաւին մո՛ւլթ կը մնան կարգ մը հարցեր, զորոնք պէտք է որ լրջօրէն բերէ հայ պատմադրութիւնը: Գիտենք թէ դժուար կատարելի աշխատանք մըն է այս մէկը եւ կ'ենթադրէ՛ ահադին զոհողութիւն. բայց կ'արժէ որ փորձուի անկա մեր պատմութեան՝ իսկ սիրոյն:

Այս բոլորէն ետք կը մնայ մեծադոյնը հարցերուն - ո՞վ է պատասխանատուն Հայկական Տասնհինգին:

Փաստերը կեղծելով չէ՛ որ երեւան կրնայ ելլել ճշմարտութիւնը: Թուրք պատմադրութիւնը, պետութիւնը, քաղաքական շրջանակները, մտաւորականութիւնը, մամուլը եւ մնացեալ բոլոր թուրք հաստատութիւնները տակաւին չկարողացան խիզախ եւ արդարակորով մարդու մը նման ընդունի՛լ պատասխանատուութիւնը, որ կ'իջնայ իրենց ճիւղին վրայ(10):

Եթէ հաւատ ընծայենք Թալէաթի, Ճեմալի եւ կարգ մը թուրք

Հիւսէիմ ճահիտ (Եսալքն), Անիտա Նեսիմի, Թեվֆիք Ալի Միւնիֆ, Ազիզ Պետրի, Պեհաէտտիմ Շաֆիք, Վեմիհի Ահմետ, Ճեմալ Լուրէր Ազգաիւլֆատիր, Սատուր Սամի, Աքքեֆ, Հասան Ճեմիլ Էդրայրմերը, ու զանոնք վտարելու որոշում տուած Լեֆ (տես՝ «Ազգակ» (օրաթերթ. Պէյրուք), 21 Դեկտեմբեր 1967, էջ 2):

10) Ընդհակառակը, վերջերս քուրք պատմագրութիւնը մեր քափով մըն է որ հրապարակ իջած՝ կը փորձէ փաստել, թէ չկայ հայկական հարց, թէ չկայ Հայկական Տասնհինգ, թէ ինչ որ կը գտնուի այդ վերադիմերուն մերքեւ սուտ է եւ կեղծիք, եւ թէ քուրքը չէր որ ջարդեց ու քանդեց հայը՝ այլ հայը՝ քուրքը: Վերջին քառորդ դարու ընթացքին սուտի եւ կեղծիքի վրայ հիմնուած այս պատմագրութեան գանձը մոխրացնելու եկան գործերը Էրչըքմի, Ուրասի, Արքըմարի, Բոշաշի, Բըրքըզլուլի, Էրօզլուլի, Պասլիւնի, Տէլիօրմանի, Եսմանի եւ Սարալի (տես՝ Atif Ercikan, *Tarihte Türk-Ermeni Munasebetleri*, Ankara, 1949, Esad Uras, *Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi*, Ankara, 1950, Erdogan Aripinar, *Ermeni Meselesi*, Istanbul, 1965, Sadi Koças, *Tarih Boyunca Ermeniler ve Türk-Ermeni İlişkeleri*, Ankara, 1967, Fahreddin Kirzioglu, *Kars İli ve Çevresinde Ermeni Mezalimi*, Ankara, 1970, Hulki S. Saral, *Ermeni Meselesi*, Ankara, 1970, Necla Başgün, *Abdülhamidin Cülûsundan Zamanimiza Kadar Türk-Ermeni Münasebetleri*, Istanbul, 1973, Altan Deliorman, *Türklere Karsi Ermeni Komiteçileri*, Istanbul, 1973, Abdullah Yaman, *Ermeni Meselesi ve Türkiye*, Istanbul, 1973, եւ Veysel Eroglu, *Ermeni Mezalimi*, Istanbul, 1973 հատարմերը: Պատմագրական այս գործերէն դուրս կան նաեւ մամուլի արտայայտութիւններ այ, որոնց մէկտեղումը ամերթոյնութիւն մըն է Հայկական Տասնհինգի լուսաբանումին համար:

պատմագիրներու հաւաստիքներուն՝ Հայկական Տասնհինգին հետ ազերս ունեցող վաւերագիրները, բոլորն ալ կը պահուին թուրք հանրապետութեան արխիւներուն մէջ: Բայց ի՛նչ որ կայ՝ հազի՛ւ թէ ըլլայ հեռուոր մէկ ազգականը Հայկական Տասնհինգին հետ աւելնչուող փաստաթուղթերուն: Այժմ իրենք՝ թուրք պատմագիրներն են որ լոյսին կը բերեն բնաջնջումի պատմութիւնները այդ փաստաթուղթերու մեծամասնութեան(11)․ իսկ թրքական հանրապետական իշխանութիւնները ո՛չ միայն ամբարփակ կը պահեն(12) այն ինչ որ փոխանցուած է իրենց որպէս վաւերագիր՝ այլ նաեւ կը խեղաթիւրեն եղածն ալ(13) եւ, նուազագոյն պարագային, կը ջանան ջնջել հետքն իսկ «փոքրամասնութիւններուն»․ իսկ հայութիւնը «փոքրամասնութիւն» էր իր բնաշխարհին մէջ(14) :

Ո՛չ Մասնաւոր Կազմակերպութիւնը առանձինն եւ ո՛չ ալ երիտասարդ-թուրք անհատներ կարող էին ի դորձ դնել այսպիսի լայնատարած, այսպիսի ահաւոր, այսպիսի ճիշդ եւ ոյժի լարում պահանջող դորձ մը, որ Հայկական Տասնհինգն էր: Երկու միլիոնէ աւելի մարդ սպաննելու համար(15) անհրաժեշտութիւն էր համարուող փոքրակցութիւնը պետական իշխանութիւններուն, բանակին եւ ժողովուրդին՝ առանց որուն հազի՛ւ թէ կարելի ըլլար մասնակի ջարդեր ստեղծել հոս ու հոն եւ՝ բաւարարուիլ անոնցմով: Մինչդեռ ի-

11) Sevket Sureyya Aydemir, *Makedonia'dan Ortaasya'ya Enver Pasa*, Cilt III, 1914-1922, Istanbul, 1972, s. 493-494

12) Frank G. Weber, *Eagles on the Crescent*, Ithaca, London, 1970, p. VII.

13) Kiazim Karabekir, *Istiklal Harbimiz*, Istanbul, 1969, s. 44.

14) Օսմանեան Կայսրութեան մէջ հայութեան մտաւոր մէկ հաշուարկութիւն համար տես՝ Զաւէն Մսրըրեան, *Նորագոյն Սփիւռքը*, 1921-1973 թթ., «Շիրակ», թ.Ձ. Տարի, քիւ. 9-10, Սեպտ.-Հոկտ., 1973, Պէյրութ, էջ 27-34: Ըստ 1880 թ.ի քուրթ պետական յայտարարութեան, ուրսումնական քուակամներուն Հալեպի, Ատամայի, Տրապիզոնի, Կարիմի, Վանի, Բաղէշի, Տիգրամակերտի, Խարբիքի եւ Սեբաստիոյ մահանգներուն մէջ կ'ապրէին միայն 726,750 հայեր (տես՝ Marcel Léart, *La Question Arménienne à la Lumière des Documents*, Paris, 1913, p. 10): Մինչ ըստ Վէյսել Էրօղլուի՝ 1914-ին Օսմանեան Կայսրութեան հայ բնակչութեան քիւմ էր 1,294,851, որում 1,161,169 հոգին՝ առաքիլական, 67,838-ն՝ Խայ աւետարանական եւ 65,844-ը՝ հայ կաթողիկէ էին (տես՝ Veysel Eroglu, *Ermeni Mezalimi*, Istanbul, 1973, s. 24):

15) Հայկական Տասնհինգի ըմբարջին հայերու ունեցած քուական կարուստի մէկ մտաւոր հաշուարկութիւն համար տես՝ Sarkis J. Karayan, M. D., *An Inquiry into the Statistics of the Turkish Genocide of the Armenians, 1915-1916*. «The Armenian Review», vol. 25, No. 4 (100), Winter, 1972, pp. 3-44.

րականութիւնը կու դայ վկայելու, թէ Օսմանեան Կայսրութեան բոլոր կարելիութիւնները, առաւել՝ քրտական եւ թրքական ամբողջները, հաղիւ՛ թէ կարողացան եւ իրագործեցին Հայկական Տասնհինգը: Ահա թէ ինչո՛ւ համար պատասխանատու են բոլորն ալ, առանց բացառութեան: Եւ անոնց հետ նա՛եւ դերմանները:

Բայց Նիւրեմպերկ մը չունեցան երիտասարդ-թուրքերը: Յաղթական համաձայնականներէն ոչ մէկը մտածեց այնպիսի ձեւով մը պատուհասել մարդկութեան առաջին ցեղասպանները, որ ա՛լ ուրիշներ չխորհէին իրենց «զաղափարական» եւ «ազգային» ծրագրիներուն համար քանդել եւ բնաջնջել պատմականօրէն դոյութիւն ունեցող ժողովուրդ մը:

Ճիշդ է, որ արեւելեան ազգերու պատմութեան համար նորութիւններ չէին ջարդերը: Պատմութիւնը ունի մէկէ աւելի փաստեր այս ուղղութեամբ: Ճիշդ է նաեւ, որ Օսմանեան Կայսրութեան սահմաններէն ներս ջարդերը դարձեր էին առօրեայ իրականութիւն: Մարդկութիւնը, արեւելքի մէջ թէ արեւմուտքի, տակաւին չէր հասած զիտակցութեան այն աստիճանին, որ ըմբռնէր «արդարութիւն» տարազին ներքին իմաստը: Ուշ, շա՛տ ուշ էր որ մարդեր պիտի անդրադառնային թէ որքա՛ն որ անհատ մարդեր ենթակայ կրնային ըլլալ արդարադատութեան՝ նոյնքան նաեւ քաղաքական մարդերն ու անոնց առաջնորդած ժողովուրդները: Նափօլէոնի եւ անոր յաջորդող գրեթէ բոլոր զինուորական եւ արքայական առաջնորդներու արարքները մնացին անպատիժ՝ առաւելագոյն պարագային անոնց արժելով հանգիստ ու խաղաղ աքսոր մը լոկ:

Եւ, ճիշդ նոյն ձեւով, Հայկական Տասնհինգի երիտասարդ-թուրք ոճրագործներն ալ մնացին անպատիժ՝ առաւելագոյն պարագային արժանանալով ժամանակաւոր եւ հանգիստ աքսորի:

Միւս կողմէ, անզլիական ժամանակաւոր ճնշումի մը ներքեւ իր խեղկատակութիւնը խաղցաւ «թրքական արդարամտութիւնը»: Պոլսոյ մէջ հաստատուած պատերազմական դատարանները շա՛տ ճարպիկ կերպով դատեցին եւ մահուան դատապարտեցին միայն անո՛նք, որոնք դուրս կը դտնուէին Օսմանեան Կայսրութեան սահմաններէն: Մնացեալներուն գրեթէ բոլորի՛ն համար ալ դտնուեցան մեղմացուցիչ դէպք յանցանացներ եւ ազատ արձակուեցան: Մահապատիժի միայն երկու գործադրութիւններ եղան, որոնց «զոհերը» նկատուեցան ազգային նահատակ ու վերածուեցան հերոսի:

Անզլիական եւ Փրանսական զբաւումի բանակները, միւս կողմէ, չուլացան բնաւ թրքական արդարամտութեան որդեգրած ուղիէն ոչ-տարբեր ընթացք մը առնելու: Քաղաքականօրէն փափուկ հարց

էր պատուհասել թուրք ու մահմետական ոճրագործ մը, որովհետեւ որպէս մահմետական երկիրներու վրայ տարածուած կայսրութիւններ՝ կարելի չէր դպչիլ իրենց ենթակայ մահմետականներու կրօնական դրացումներուն: Տակաւին անհրաժեշտ էր հայոց դէմ դործադրուած ցեղասպանութեան պատասխանատուները ձեռքի տակ ունենալ հետադայ սակարկութիւններու համար: Աւելին՝ պէտք էր ապահով պահել դանոնք եւ պաշտպանել հայերու վրէժխնդրութենէն:

Մալթա եւ այլուր աքսորուած երիտասարդ-թուրք ղեկավարները ունեցան լաւադո՛յնը ապրելակերպին եւ ազատութեան: Երէկի ոճրագործներն հասեր էին վարկի ու պատիւի, եւ բարձրացած՝ անոնց դինը: Թուրքը դիտցաւ սո՛ւղ ծախել ինքզինքը: Օրինակի համար՝ անդլիացի Զօրավար Թաուսենտի մը գերեզմարութենէ ազատուին համար անդլիական իշխանութիւնները ազատ արձակեցին առաջին կարգի երիտասարդ-թուրք չո՛րս ղեկավարներ: Եւ ապա՝ երբ ստորադրուեցաւ պատերազմական գերիներու փոխանակութեան թուրք-անդլիական համաձայնագիրը՝ արդէն իսկ փոխուեցաւ նկարագիրը երիտասարդ-թուրք ոճրագործներուն, եւ գրիչի մէ՛կ հարուածով, երէկի ոճրագործները յայտարարուեցան պատերազմական դերի, այսինքն մարդ մը, որ զէնքը ձեռքին իջած էր ռազմաճակատ, պաշտպանելու համար հայրենիք ու պատիւ եւ, սակայն, դէպքերու դժբախտ դասուորումով մը ինկած էր ձեռքը թշնամիին: Որպէս աղպիսին, ուրեմն, Մալթա եւ այլուր աքսորուածները ունէին ո՛չ մէկ աղերս այն ոճիրին հետ, զոր կատարեր էին իրենք ամբողջ ժողովուրդ մը բնաջնջելով:

Այսպէ՛ս էր որ Լոզանի ստորագրութեան շրջանին պարպուեր էր Մալթան իր երիտասարդ-թուրք բնակիչներէն, որոնք, բոլորն ալ, առանց բացառութեան, փոխանակութեան կամ թոյլատրուած փախուստի միջոցով, ազատագրուեցան եւ հասան Անդարա, ուր եւ անցան պատասխանատու պաշտօններու:

Այսօր որոնել ինչո՛ւն այս բոլորին՝ մեզ պիտի տանէր մանրամասն մէկ վերլուծումին արեւմտեան դիւանագիտութեան: Մեզի համար հիմնական կը մնայ մէ՛կ ճշմարտութիւն – յաղթական համաձայնականները զիտակցօրէն խաթարեցին դիմագիծը արդարութեան եւ գոբհներու տիղմին նետեցին զայն, ոտնակոխելով մարդկային ամէն արժանապատուութիւն: Փաստերու առատութեան պէտք չկայ հիմնաւորելու համար այս բոլորը. կը բաւէ միայն ըսել, թէ Լոզանով վերջ գտան բոլո՛ր սկզբունքները, բոլո՛ր մարդկայնական խոստումները, բոլո՛ր գեղեցիկ խօսքերը, եւ երէկի ոճրագործները սրբուեցան, մաքրուեցան եւ վերածուեցան բարոյական շքեղ կառոյցով հայրենասէրներու:

Բայց Սեւը արդէն իսկ ցոյց էր տուած այն ուղին, որուն ճամբորդները պիտի ըլլային համաձայնականները: Արդարութիւնը ո՛չ թէ վերաւորուած էր Սեւրով՝ այլ ոտնակոխուած, տրորուած եւ ցեխակալած, իսկ Լողանով՝ պարզօրէն խորտակուած:

Այս էր հիմնական պատճառը «Հայկական Նիւրեմպերկ»ի մը դոյառնումին. եւ այն ի՛նչ որ չկատարեցին յաղթականները՝ չափով մը կատարեց հայուն վրիժառու բազուկը: Եւ ինկա՛ն Թալէաթը, Սայիտ Հալիմը, Տոբթոր Նազըմը, Պեհաէտտին Շաքիրը, Ճիվանշիրը, եւ ուրիշներ: Անոնց հետ ինկաւ նաեւ Էնվերը, շատ հաւանաբար հայ համայնավարի մը գնդակով, Թիւրքմենիստանի մէջ: Բայց...

Բայց հո՛ս ալ կեցաւ հարուածը: Հայկական Նիւրեմպերկը չկարողացաւ երթալ մինչեւ ծայրը. չկարողացա՛ւ պարզօրէն՝ որովհետեւ անմիջապէս սկսան անհասկացողութիւնները. եւ կասեցաւ հարուածը ճի՛շդ այն ատեն՝ երբ սկսած էր արմատական հոռնի մէջ մտնել, ու սարսափի մատնել արդարութենէն փախածներն ու արդարութիւնը ոտնակոխողները:

Ո՞վ էր պատասխանատուն այս կացութեան համար. ինչո՞ւ կեցաւ թոխչքը հայու հոգիին. ո՞վ արգելեց զայն. ի՞նչ բաներ պատճառ եղան, որ պատժելէ առաջ չարիքը՝ հայ մարդեր ապրին սարսափը ձախողութեան: Հարցեր են ասոնք, որոնց պատասխանը չտրուեցաւ ընաւ, եւ աշխարհի ամբողջ տարածքին վրայ տարտղնած հայեր ակնկառոյց սպասեցին յաջորդ հարուածին, որ չեկա՛ւ երբեք:

Այս հարցումներուն մէկ մասին պատասխանը կը դտնուի Շահան Նաթալիի մօտ: Բայց Նաթալին տուա՞ւ այդ պատասխանը իր ամբողջութեանը մէջ: Մնացեալին պատասխանները կը մնան տեղ մը թաղուած, եւ անշուշտ որ կան հայ մարդեր եւ կազմակերպութիւններ, որոնք գիտեն թէ ո՞ւր են ասոնք, եւ ի՞նչ: Բայց ասոնք ալ կը պահեն գանոնք մեծ դադտնիքի մը նման: Ինչո՞ւ, կ'անգիտանա՞նք:

Մէկ բան յստակ է սակայն, թէ այն ինչ որ յաղթական համաձայնականները ըրած պիտի ըլլային՝ չըրին: Իսկ Հայկական Տասնհինգէն հազիւ թէ ճողոպրած հայեր երբ սկսան ընել զայն՝ կեցա՛ն:

Արգելուեցան, եւ անո՞ր համար կեցան: Հա՛րց մըն է հիմա:

Եւ, սակայն, երկու միլիոնէ աւելի հայերու անմեղ արիւնը մնաց անվճար:

PERPETRATORS OF THE ARMENIAN GENOCIDE

LEVON VARTAN

(Summary)

The Turkish perpetration of the Armenian genocide was conceived by the Central Committee of the Young Turks' Party, in the meetings of a special organization. The Central Committee of the Party, by virtue of its being a state within the state and above the governmental and military powers, had all the means to put into effect the extirpation of Armenians. After World War I, the nationalist Turks, under the guidance of Mustafa Kemal, continued the work started by the Young Turks in their genocidal policy. The perpetrators of the Armenian genocide, instead of facing justice, attempted, through their memoirs, to pervert history, hoping to emerge innocent of their criminality. Such were the memoirs of Jemal Pasha, of Talat, of Dr. Rashed, and of many others. After World War I, the victorious powers craftily avoided the setting of a Nuremberg, thus allowing the Turkish perpetrators of the Armenian genocide to enjoy their protection. These powers considered their political and economic interests a priority, and therefore committed to oblivion the just demands of their «small ally», the Armenians. In view of this indifference, the Armenians attempted to set up a Nuremberg in their own way. They killed some of the chief perpetrators — Talat, Said Halim, Dr. Nazem, Bahaeddin Shaker, Jevanshir, and others. But justice was not brought to consummation, and the blood of more than two million slaughtered Armenians remained without compensation.